ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի նոյեմբերի 26-ից 27-ը ք.Թբիլիսի (Վրաստան)
գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Շուշանիկ Ներսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք.Թբիլիսի (Վրաստան), նոյեմբերի 25-ից 27-ը

4. Հրավիրող կողմը՝

Վրաստանի Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր քննարկել ՀՀ և Վրաստանի մաքսային ծառայության միջև համագործակցության հետագա ուղղությունները, համատեղ ուսումնական միջոցառումների անցկացման հնարավորությունները, մաքսային ընթացակարգերի ներդաշնակեցման և համապատասխանեցման հարցեր, մաքսային վիճակագրական տվյալների փափոխման ոլորտում համագործակցության ամրապնդման հարցեր, ուսումնասիրել Վրաստանի «Թբիլիսի» մաքսային ձևակերպումների գոտու գործունեությունը, ինչպես նաև մաքսային ձևակերպումների կազմակերպման սխեմայի վրացական փորձը:

Միաժամանակ իրականացվեց այցելություն «Սադախլո» սահմանային անցման կետ, որտեղ հնարավորություն եղավ տեղում ծանոթանալ սահմանահատումային գործընթացի առանձնահատկություններին և այլն:

6. Քննարկված թեմաները

Քննարկվել են սահմանային մաքսային հսկողության առկա խնդիրները, երկու կողմերի ստորաբաժանումների միջև աշխատանքային կապերը սերտացնելու անհրաժեշտությունը, մաքսային ոլորտում տեղեկատվության փոխանակման վերաբերյալ պայմանագրի Վրաստանի Հանրապետությունում ներպետական համաձայնեցման ընթացքը, հետբացթողումային հսկողության շրջանակներում իրականացվող հարցումների կապակցությամբ տրամադրվող տեղեկատվության և փաստաթղթերի շրջանակը,

Վրաստանի Հանրապետությունում իրականացված մաքսային ոլորտի բարեփոխումների փորձը մեր կողմից ուսումնասիրելու հնարավորությունները: Ինչպես նաև քննարկվել են մաքսային վիճակագրական տվյալների եռամսյակային փոխանակման և տարեկան համադրությունների կատարման անհրաժեշտությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նոյեմբերի 26-ին տեղի է ունեցել հանդիպում Վրաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավարության հետ (ծառայության ղեկավարի, նրա մաքսային ոլորտը համակարգող տեղակալի, միջազգային համագործակցության վարչության պետի մասնակցությամբ), որի ընթացքում քննարկվել են վերը նշված թեմաները: Նույն օրը տեղի է ունեցել այց ՎՀ եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտ, որտեղ մեզ է ներկայացվել Կոնտեյներների հսկողության ծրագրի շրջանակում ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի փորձը: Այնուհետև այցելել ենք Թբիլիսի քաղաքում գործող մաքսային ձևակերպումների կենտրոն և ճանապարհային ոստիկանության գրանցման գրասենյակ, որտեղ մեզ է ներկայացվել մաքսային ձևակերպումների կազմակերպման վրացական փորձը և մարդատար ավտոմեքենաների մաքսային ձևակերպման ոլորտում ոստիկանության մարմինների հետ համագործակցության փորձը: Նոյեմբերի 27-ին տեղի է ունեցել այց Սադախլո սահմանային անցումային կետ, որտեղ ներկայացվել է մաքսային գործառնությունների իրականացման կազմակերպչական սխեման:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները.

- Մաքսային սահմանի Բագրատաշեն-Սադախլո հատվածի այսպես կոչված «չեզոք գոտում» չարտոնված գործունեություն թույլ չտալու համար երկու կողմերում ուժեղացնել հսկողությունը: Մասնավորապես արգելել այդ հատվածում բեռնատար տրանսպորտային միջոցների բեռնաթափումը, ինչը հանգեցնում է ապրանքային քանակների «փոշիացմանը» այսինքն՝ ֆիզիկական անձանց համար թույլատրելի փոքր քանակներով ներկրմանը: Նման անհրաժեշտության դեպքում տրանսպորտային միջոցները կբեռնաթափվեն ՀՀ տարածքի մաքսային հսկողության գոտում՝ մաքսային մարմինների հսկողության ներքո: ՀՀ մաքսային ծառայությանը կտրամադրվեն նաև այդ ապրանքներին վերաբերող փաստաթղթերը:
- Կողմերը կփոխանակվեն մաքսատների և մաքսային կետերի ղեկավար անձնակազմի կոնտակտային տվյալներով՝ ընթացիկ աշխատանքային խնդիրները լուծելու համար համագործակցության հնարավորություններն ընդլայնելու համար:
- Առաջիկայում կկազմակերպվի վիդեոկոնֆերանս՝ տեղեկատվության փոխանակման համաձայնագրի ստորագրման հարցը մասնագիտական մակարդակում քննարկելու համար:

- Վրացական կողմը խոստացավ Վրաստանից Հայաստան վերաարտահանվող ապրանքների վերաբերյալ հնարավորինս դետալացված տեղեկատվություն փոխանցել՝ ՀՀ մաքսային մարմիններից հետբացթողումային հսկողության նպատակներով իրականացվելիք հարցումներին ի պատասխան:
- Եռամսյակային մաքսային վիճակագրական տվյալների փոխանակման վերսկսում
- Կողմերը կկազմակերպեն վիճակագրական տվյալների տարեկան համադրման աշխատանքները՝ մաքսային վիճակագրական շտեմարանների ճշգրտությունը բարելավելու և ռիսկերը բացահայտելու նպատակներով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մաքսային ոլորտում բարեփոխումների վրացական փորձը ՀՀ մաքսային համակարգի համար որոշ ուղղություններով կարող է օրինակելի լինել: Մասնավորապես, կարծում ենք, մաքսային ձևակերպումների ընթացքը թափանցիկ, հնարավորինս հասկանալի և արդյունավետ դարձնելու համար կարելի է քննարկել ՀՀ-ում մաքսային ձևակերպումների կենտրոնների ստեղծման հնարավորությունը, որտեղ մաքսային գործի հետ կապված միջնորդական ծառայությունները (հայտարարագրում, պահպանություն և այլն) ԱՏԳ մասնակիցներին և ֆիզիկական անձանց կմատուցվեն անմիջականորեն մաքսային մարմինների կամ վերջիններիս կողմից ստեղծված ՊՈԱԿ-ի կողմից: Նույն կետնրոնում կտեղակայվեն մաքսային գործառնությունների ընթացքում դերակատարում ունեցող պետական և այլ մարմինների ստորաբաժանումները (ՍԱՊԾ, սերտիֆիկացման մարմիններ և այլն), ինչը թույլ կտա ԱՏԳ մասնակիցներին և ֆիզիկական անձանց նույն վայրում մատուցել անհրաժեշտ բոլոր ծառայությունները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

X _____

30.11.2018թ.